№ 7 (11)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

7 (11)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №7 (11). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 202 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

МЕЖДОМЕТИЯ В РЕЧИ, ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ

Арменуи Мнацакановна Мхитарян
mkhitaryanarmenuhi@mail.ru

К.ф.н., доцент кафедры родного языка и методики его преподавания, Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Эмотивные междометия выражают различные положительные и отрицательные эмоции, возникающие у человека как реакция на окружающую действительность, на действия и поведение других людей, состояние окружающей природы и пр. Стилистическое использование междометий наполняет речь различными эмоциями, увеличивая воздействие на читателя.

Ключевые слова: речь, междометие, стилистическое применение, влияние речи, эмоциональный.

Հայտնի է, որ ձայնարկությունները մարդկային զգացումների արտահայտություններն են։ Հեղինակը սրանց օգնությամբ իր խոսքը դարձնում է զգացմունքային, խիստ հուզական՝ ունկնդրի և ընթերցողի հոգում առաջ բերելով համապատասխան ապրումներ ու զգայություններ, որին մեծապես նպաստում է նաև հնչերանգը [8: 331–332]։

Չնաբանական մակարդակում լեզվական միավորների ընտրության հնարավորությունները, դրանց ոճական, արտահայտչական նրբերանգները սահմանափակ են՝ պայմանավորված լեզվի նորմայի պահանջով, քանի որ ձևաբանական կարգերի ոճական կիրառությունը նորմատիվ բնույթ ունի՝ ի տարբերություն բառագիտական և շարահյուսական կարգերի։ Չնայած նշված սահմանափակությանը՝ խոսքի մեջ, հատկապես գեղարվեստական ստեղծագործություններում խոսքի մասերի ոճական արժեքն ակնհայտ է։ Յուրա-

քանչյուր խոսքի մաս իրեն բնորոշ առանձնահատկությամբ է ձևավորում պատկերավոր խոսք [4: 247–248]:

Ինչ վերաբերում է ձայնարկություններին, ապա հարկ է նշել, որ հայերենում ձայնարկությունները առանձնանում են իբրև վերաբերմունքային խոսքի մասեր, որոնք զուրկ են թե՛ նյութական, թե՛ քերականական իմաստներից, չեն թեքվում, նախադասության անդամ չեն դառնում, բայց և նախադասության ձևավորման գործընթացում պակաս կարևոր դեր չեն կատարում: Ձայնարկություններն արտահայտում են զգացական վերաբերմունք, այն է՝ խոսողի կամ հեղինակի հոգեկան ապրումները, կրքերը, կամքը, հույզերը, զգացումներն այս կամ այն երևույթի նկատմամբ, որով էլ հենց հակադրվում են ոչ միայն նյութական իմաստ ունեցող բառերին, այլև նույնիսկ վերաբերականներին, որոնք եղանակավորում են բայերը:

«Ի տարբերություն նյութական խոսքի մասերի, որոնք կամ ցույց են տալիս հասկացություններ՝ առանց անվանելու դրանք, ի տարբերություն կապի, շաղկապի և եղանակավորող բառերի, որոնք տրամաբանական կամ քերականական հարաբերություններ են արտահայտում, ձայնարկությունները չեն անվանում ոչ հույզը, ոչ զգացմունքը, ոչ ապրումը և ոչ էլ որևէ հարաբերություն են արտահայտում: Դրանք հենց զգացումների արտահայտություններն են» [8: 331]:

Խոսողը կամ հեղինակը, խոսքում կիրառելով այս կամ այն ձայնարկությունը, նշում է, որ իրեն միևնույն չէ, ինքն անտարբեր չէ տվյալ երևույթի նկատմամբ, հետևաբար և արտահայտում է իր այս կամ այն զգացումն ու զգացմունքը: Եթե վերջիններս արտահայտվեն դատողական վերաբերմունք ցույց տվող բառերով, այն է՝ վերաբերականներով, ապա այդ պարագայում արտահայտչականությունը, զգացականությունն ու հուզականությունն այդքան էլ ուժեղ չի դրսևորվի: Հենց սրանով էլ պայմանավորված է ձայնարկությունների կիրառությունը խոսքում: Որպես կանոն, գիտական և պաշտոնական ոճերում դրանք չեն գործածվում, գրական ոճում և առհասարակ բարձր ոճերում ձայնարկություններն ավելի սակավ են գործածվում, այն էլ միայն ավա՛ղ բառը: Հակառակը լայն կիրառություն ունեն հատկապես կենդանի

ժողովրդախոսակցական խոսքում և գեղարվեստական գրականության մեջ, քանի որ վերջիններս խոսքը հագեցնում են հուզականությամբ և արտահայտչականությամբ։

Օրինակ՝ Ա՛խ, թե թվանք ունենայի, Մի գնդակով կըսպանեի (ՀԹ, 3, էջ 31)։ Լցվեց, հեկեկաց Մեհրին դառնագին. Սիրտ տվեց Մհեն. – «Բան չըկա, ա՛յ կին»... (ՀԹ, 3, էջ 38)։

Հարկ է նշել, որ ձայնարկությունները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ զգացական կամ բացականչական և կամային կամ կոչական։

Զգացական ձայնարկություններն արտահայտում են խոսողի ամենատարբեր զգացմունքները՝ հիացմունք, ուրախություն, հաճելիություն, զարմանք, արհամարհանք, դժգոհություն, տհաճություն, անտարբերություն, վախ, ցավ, վիշտ, զղջում, ափսոսանք և այլն։ Վերոնշյալ հույզները նշող ձայնարկությունների կիրառությունն արդեն խոսքը լիցքավորում է համապատասխան հույզով և տրամադրություն է ստեղծում։ Ինչպես տեսանք, ձայնարկությունները բավական հարուստ են իմաստային բազմազանությամբ, ինչպես նաև քանակով [1: 266–267]։ Այդ իսկ պատճառով էլ զգացական ձայնարկությունները բաժանվում են երկու տեսակի՝ դրական և բացասական։

Դրական են, օրինակ, ուրախությունը, հրճվանքը, հիացում, ցնծությունը, ոգևորությունը, գորովանքը, բավականություն, պարծանք, զարմանք և այլն։ Այդպիսին են՝ ա՛յ, ջա՛ն, ա՛յ ջան, է՛յ ջան, հե՛յ ջան, ուխա՛յ, օխա՛յ, ա՛, ո՛ւ, ո՛յ, օ՛հ, ո՛ւֆ, բա՛, բա՛հ, պա՛, պա՛հ, փիե՛, պիա՛ և այլն։ Այս ձայնարկությունների կիրառությունը խոսքում հենց այդպիսի երանգ է հաղորդում խոսքին՝ ուրախության, հիացմունքի և այլն։ Բերենք տարբեր օրինակներ։

Ուրախություն, հաճելիություն, հիացմունք՝ Արի՛, ջա՛ն, արի՛, Քու գալուն մեռնեմ, Թուխ չորբան, արի՛, Կարոտըս առնեմ (ՀԹ, 3, էջ 107)։ Հե՛յ, ջա՛ն, մենք էլ զգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե՞ հուր լեզուն Խայամի (ՀԹ)։ «Է՛յ ջան, սարե՛ր, Սասման սարե՛ր...» (ՀԹ, 4, էջ 12)։

Հեղինակը, օգտագործելով վերը նշված ձայնարկությունները, արտահայտում է իր ուրախությունը, հաճելիության զգացումը և հիացմունքը։

Բացասական են ցավը, տանջանքը, տրտմությունը, հիասթափությունը, տառապանքը, մորմոքը, տխրությունը, վիշտը, մտահոգությունը, վախը, տագնապը, սարսափը, բարկությունը, ատելությունը, արհամարհանքը, զզվանքը, հուսահատությունը, տհաճությունը, ափսոսանքը, կարեկցանքը, ցավակցությունը և այլն: Այդպիսին են՝ ի՛, իա՛, է՛, ը՛, ա՛խ, վա՛, վա՛խ, վա՛յ, վա՛հ, վո՛ւյ, վայ–վա՛յ, հայ–հա՛յ, ա՛հ, օ՛ֆ, ո՛ւֆ, օ՛յ, ամա՛ն, օ՛հ, օհո՛, է՛հ, ը՛հ, ո՛ւհ, էհե՛, պահո՛, պա՛հ, պահ–պա՛հ, ավա՛ղ, վա՛շ, վաշ–վի՛շ, վուշ–վո՛ւշ, յա՛խկ, թյո՛ւ, փո՛ւհ և այլն: Երբ խոսքում կիրառվում են նշված ձայնարկությունները, ապա խոսողն արտահայտում է իր բացասական հույզերը: Բերենք տարբեր օրինակներ:

Ջարմանք, վախ՝ Քաղքըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝ Գալիս են հըրես անհամար գազան. «Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...» (ՀԹ, 4, էջ 12): – Վա՛հ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քընում… (ՀԹ, 4, էջ 13): Օ՛, չէ՛, չէ, հայր սուրբ, նա չէ իջանում, Ինչպես սուրբ հոգին, աստծո խորանից … (ՀԹ, 3, էջ 62):

Ցավ, վիշտ՝ – Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ, Վո՛ւշ քու սերին, քու յարին... Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ, Վո՛ւշ քու սիրած սարերին... (ՀԹ, 3, էջ 82): – Բարձըր սարեր, ա՛յ սարեր, Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր, Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք, Իմ դարդերի թայ սարե՛ր (ՀԹ, 3, էջ 100):

Տհաճություն, զզվանք՝ Թո՛ւհ, ոչինչ չկա ձեռքներիս… ինչի ենք պետք առանց դանակի…(ՎԱ): Մին էլ են տեսա՝ կում արավ ու մարդի պես երեսիս մի մեծ թքեց՝ թու (ՀԹ):

Դժգոհություն՝ – Օ՛ֆ, ի՛նչ դըժար է, հորեղբայր Օհան. Աստված օխնել է էն սև-սև ուլեր… (ՀԹ, 4, էջ 14): – Օ՛, ո՛ր բախտից... ա՛յ սևերե՛ս, Ահա շարեմ հիշիր ու տե՛ս… (ՀԹ, 3, էջ 132): Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ, Չեմ հասկանում՝ դեպի ուր... (ՀԹ, 3, էջ 93): Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում Տանջվում են միշտ էսպես զուր… (ՀԹ, 3, էջ 93):

Հանդիմանություն, կշտամբանք՝ Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զոռով, Ա՛յ սարի աղջիկ, Ա՛յ սիրուն աղջիկ, Ա՛յ դու կարմրաթուշ, Թուխամազ Անուշ (ՀԹ, 3, էջ 84): – Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազըդ կըտրած... (ՀԹ, 3, էջ 86):

Զղջում, ափսոսանք՝ Վահան Տերյանն ասաց – ավա՛ղ, ինչո՞ւ դրի սրտիս կապանք…

Անտարբերություն, համակերպում՝ Է՛հ, մի՛ խոսեցնի, աստված կըսիրես, Թե չէ մի ղաչաղ կըդառնամ ես Էլ… (ՀԹ, 3, էջ 77)։ Հուղարկներն այնժամ մոտ եկան մի-մի. – Է՛հ, աստված նըրա հոգուն ողորմի. … (ՀԹ, 3, էջ 123)։ Ը՛հ, հիմար, ասում է կինը (ՀԹ, 3, էջ 109)։

Կամային կամ կոչական ձայնարկություններն արտահայտում են խոսողի՝ խոսակցին ուղղված կամքը, որը նպատակ ունի ուշադրությունը գրավելու, որևէ միտք հայտնելու կամ էլ խոսակցին մղելու որևէ գործողության։

Օրինակ՝ Է՛յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սրտալի… (ՀԹ)։ Անու՛շ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի… (ՀԹ, 3, էջ 109)։ – Ա՛յ խաբեբա, Ահա ես էլ էդ եմ լալիս. … (ՀԹ, 3, էջ 130)։ – Ա՛յ ապերախտ, ի՞նչ ես ասում … (ՀԹ, 3, էջ 131)։ «Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...» (ՀԹ, 4, էջ 12)։ Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր. Ելե՛ք, շուտով բացեք դըռներ… (ՀԹ, 4, էջ 13)։ – Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած, Էս խենթը բերիր, արիր գառնարած… (ՀԹ, 4, էջ 13)։

Երբեմն խոսողը կարող է անձնավորել առարկաները, երևույթները, անգամ կենդանիներին՝ խոսքին համապատասխան հուզականություն հաղորդելու նպատակով։ Օրինակ՝ – Բարձըր սարեր, ա՛յ սարեր, Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր, Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք, Իմ դարդերի թայ սարե՛ր (ՀԹ, 3, էջ 100)։ Ի՛նչ մեծ բան ա, տո՛, հե՛ր օրհնած, Միա՛յն, միա՛յն մի գդակի վարձ (ՀԹ)։

Հարկ է նշել, որ ձայնարկությունները խոսքում շատ հաճախ կարող են տարբեր իմաստներով կիրառվել, քանի որ իրադրային խոսքի մաս են։ Այս պարագայում և ընդհանրապես խիստ կարևոր է համապատասխան հնչերանգը, որը տարբեր նշանակություններ կարող է հաղորդել խոսքին [8: 332]։ Օրինակ, այ–ը, ստանալով բացականչական նշան, կարող է արտահայտել դրական հույզ, իսկ շեշտ ստանալու դեպքում՝ հանդիմանություն, կշտամբանք։

Հմմտ. Մի ամսից հետո տըղերքն եկան տուն, Գովելով նըրա արարքը ճարպիկ. – Հալալ է տըղին, ա՛յ իգիթություն, Ահա թե ինչպես կըփախցնեն աղջիկ (ՀԹ, 3, էջ 99)։ Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր, Որ գալիս եք սարերից… (ՀԹ, 3, էջ 86)։ – Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մազըդ կըտրած… (ՀԹ, 3, էջ 86)։

Անու՛շ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի… (ՀԹ, 3, էջ 109)։ Ա՛յ, դու կեղծավո՛ր, սիրուն անպիտան. Ես լավ եմ տեսնում այժըմ ամեն բան։ Դու ինձ ես մենակ միամիտ գըտել. Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ, Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կըննկանը – Ասա՛, թե մենակ փողը չի բանը... (ՀԹ, 3, էջ 139)։ – Իմ ազնի՛վ Մուսա՛, Ա՛յ, է՛դպես խոսա… (ՀԹ, 3, էջ 138)։ – Ա՛յ ապերախտ, ի՞նչ ես ասում… (ՀԹ, 3, էջ 131)։ – Օ՛, ո՛ր բախտից... ա՛յ սևերե՛ս, Ահա շարեմ հիշիր ու տե՛ս… (ՀԹ, 3, էջ 132)։ – Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ, Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք, Հարստություն, հանգիստ, հեշտ կյանք... (ՀԹ, 3, էջ 133)։

Վերը բերված օրինակներից պարզ երևում է, որ այ ձայնարկությունն իսկապես կարող է տարբեր նշանակություններ հաղորդել խոսքին։

Ա՛խ ձայնարկությունը ևս կարող է բազմիմաստություն դրսևորել խոսքում և տարբեր իմաստներով հանդես գալ։

Հմմտ. Թե լալիս ես՝ յարդ ես ուզում, Ա՛խ, նա գընա՛ց, նա գընա՛ց… (ՀԹ, 3, էջ 105)։ Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ… (ՀԹ)։ Ա՛խ, չէ՛, ամա՛ն, ասում են դա Մի դիակ է լո՛ւռ, հոտած, Արյունը չոր դեմքի վըրա … (ՀԹ, 3, էջ 108)։ – Ա՛խ, մի ծիտ դառնամ, թռչեմ ու գնամ, Գտնեմ Միեիս, տեսնեմ մի անգամ.

Բայց ո՞վ կըտա ինձ թռչելու թևեր... (ՀԹ, 3, էջ 45)։

Վերոնշյալ օրինակներից պարզ դարձավ, որ ա՛խ-ը կարող է արտահայտել թե՛ ցավ, կարեկցանք, թե՛ զղջում, ափսոսանք, թե՛ ուրախություն և թե՛ վախ ու վիշտ։

Բացառություն չէ նաև վայ ձայնարկությունը, այն նույնպես խոսքում կարող է հանդես գալ տարատեսակ իմաստերով և արտահայտել թե՛ հանդիմանություն, թե՛ ցավի զգացմունք, զարմանք, դժգոհություն։

Հմմտ. «Ալե՛ք, Ալե՛ք, ու՞ր ես գնում, Վա՛յ իմ գլխին, ի՞նչ ես անում… (ՀԹ, 3, էջ 29)։ Ճիչ արձակեց մի ցավալի, «Վա՛յ, իմ Ալի, իգիթ Ալի…» (ՀԹ, 3, էջ 31)։ Բայց վա՛յ խեղճ որբին աշխարքի վըրա, Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա (ՀԹ, 4, էջ 11)։ Ա՛խ, կըմեռնեմ՝ ամա նա Վա՛յ թե հանկարծ իմանա, Ես ազատվեմ էս ցավից, Աչքը լալով նա մընա (ՀԹ, 3, էջ 101)։

Հարկ է առանձնացնել հատկապես ջան ձայնարկությունը: Եթե այն կիրառվում է կոչականի հետ, ապա սիրալիրության, քնքշանքի և մտերմության վերաբերմունք է արտահայտում [4: 305], իսկ երբեմն էլ ներկայացնում է անչափելի, աննկարագրելի հույզ և զգացմունքայնություն:

Օրինակ՝ – Ամեն անգամ Ջանոն էլ հոր ետևից կրկնում էր. «Սո՛ւս, Սարիկ ջան, սո՛ւս», ու միշտ էլ ավելացնում էր՝ «մայրիկը հիմի կգա» (ՀԹ): – Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՛ն,

Ո՞վ անիծեց, Մարո ջա՛ն, Ո՞ւր փախար դու, Մարո ջա՛ն, Տուն արի՛, տո՛ւն, Մարո ջա՛ն, Խո՛ր ես քընել, Մարո ջա՛ն, Չե՛ս զարթնում էլ, Մարո ջա՛ն... (ՀԹ, 3, էջ 14): Հիմի բացե՛լ են հանդես

Երգիչները իմ անտես Ջա՛ն, հայրենի՛ ծղրիդներ, Ո՞վ է արդյոք լսում ձեզ (ՀԹ): Ջա՛ն, իմ յարն է, ջանի՛ն մեռնեմ, Ծաղկի հոտով նա հարբել, Սարի լանջին, հովի միջին

Մուշ-մո՛ւշ, անուշ մըրափել (ՀԹ, 3, էջ 107):

Կամային կամ կոչական ձայնարկությունները նույնպես կարող են բազմիամստություն դրսևորել և տարբեր իմաստներով կիրառվել:

Օրինակ՝ Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ … (ՀԹ): Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր. Անդարձ ու հին ճամփաներ… (ՀԹ): Աղջի, հե՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ… Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ»… (ՀԹ, 3, էջ 87): – Անո՛ւշ, հե՛յ Անո՛ւշ… ջուր հասցրե՛ք, ջո՛ւր… (ՀԹ, 3, էջ 102): – Հե՛յ, Մուսայի ընկերն եմ ես, Ձեն տըվի ես ոգևորված… (ՀԹ, 3, էջ 134): Հե՛յ, ի՛նչ անմիտ խոսք է էսօր ժամը կողքին էս շիրմի… Հե՛յ, անուշ ջա՛ն, ի՛նչ ես հարցնում՝ ժամի քանիսն է հիմի…(ՀԹ): Հե՛յ-հե՛յ, կանչեցի, ձեն տըվող չելավ. Շունը գազազեց, շունը վեր կալավ… Հե՛յ գիդի, ասի ինքս իմ միջում, Ի՛նչ է մընացել առաջվան տըղից… (ՀԹ, 3, էջ 98):

Ինչպես տեսանք, ձայնարկություններն արտահայտում են զգացական վերաբերմունք, այն է՝ խոսողի կամ հեղինակի հոգեկան ապրումները, կրքերը, կամքը, հույզերը, զգացումներն այս կամ այն երևույթի նկատմամբ, որով էլ հենց հակադրվում են ոչ միայն նյութական իմաստ ունեցող բառերին, այլև նույնիսկ վերաբերականներին, որոնք եղանակավորում են բայերը: Ձայնար-

կությունները, ի տարբերություն նյութական խոսքի մասերի, որոնք կամ ցույց են տալիս հասկացություններ՝ առանց անվանելու դրանք, ի տարբերություն կապի, շաղկապի և եղանակավորող բառերի, որոնք տրամաբանական կամ քերականական հարաբերություններ են արտահայտում, չեն անվանում ոչ հույզը, ոչ զգացմունքը, ոչ ապրումը և ոչ էլ որևէ հարաբերություն են արտահայտում: Դրանք հենց զգացումների արտահայտություններն են: Խոսողը կամ հեղինակը, խոսքում կիրառելով այս կամ այն ձայնարկությունը, նշում է, որ իրեն միևնույն չէ, ինքն անտարբեր չէ տվյալ երևույթի նկատմամբ, հետևաբար և արտահայտում է իր այս կամ այն զգացումն ու զգացմունքը: Հետևաբար և ձայնարկությունների ոճական կիրառությունները զգացական տարբեր լիցքավորումներ կարող են հաղորդել խոսքին՝ արտահայտելով հեղինակի ապրումները, հույզերն ու զգացմունքները՝ այն օժտելով տարատեսակ հույզերով և զգացմունքայնությամբ՝ բազմապատկելով խոսքի ներգործությունն ընթերցողի վրա:

ЛИТЕРАТУРА

1. *Աբրահամյան Ս.* Ժամանակակից գրական հայերեն: – Երևան, 1981:
2. *Ասատրյան Մ.* Ժամանակակից հայոց լեզու: – Երևան, 2002:
3. *Բաղիկյան Խ.* Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն: – Երևան, 2010:
4. *Եգիկյան Լ.* Հայոց լեզվի ոճագիտություն: – Երևան, 2006:
5. *Թումանյան Հ.* Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. III, Պոեմներ: – Երևան, 1989:
6. *Թումանյան Հ.* Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. IV, Պոեմներ: – Երևան, 1991:
7. *Մկրտչյան Ռ.* Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն: – Երևան, 1992:
8. *Պողոսյան Պ.* Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք I: – Երևան, 1990:

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ, ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.Մ. Մխիթարյան
mkhitaryanarmenuhi@mail.ru

Բ.գ.թ., դոցենտ,
մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Չայնարկությունների ոճական կիրառությունները զգացական տարբեր լիցքավորումներ կարող են հաղորդել խոսքին՝ այն օժտելով տարատեսակ հույզերով և զգացմունքայնությամբ՝ ներգործությունն ընթերցողի վրա:
Բանալի բառեր՝ խոսք, ձայնարկություն, ոճական կիրառություն, խոսքի ներգործություն, զգացմունքային:

INTERJECTIONS IN SPEECH, THEIR STYLISTIC APPLICATION

A. Mkhitaryan
mkhitaryanarmenuhi@mail.ru

Candidate of Philological Sciences, Associate Professor,
Associate Professor of the Department of Native Language and Methods of its Teaching,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The stylistic use of interjections can lead to different emotional charges, filling speech with various emotions and sensuality, multiplying the influence of speech on the reader.
Keywords: speech, interjection, stylistic use, emotional.

Информация о статье:
статья поступила в редакцию 17 октября 2020 г.,
подписана к печати в номер 7 (11) / 2021 – 21.13.2021 г.